ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2025թ. թիվ 701-Ա

Ս.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի՝ ՀՀ Լոռու մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 447 արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սյուզաննա Սիմոնի Դոլմազյանին 2025 թվականի նոյեմբերի 10-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ մեկ տարի փորձաշրջանով:

2. Սյուզաննա Դոլմազյանի փորձաշրջանի համակարգող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վարսիկ Ասրյանին:

3. Ս.Դոլմազյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

4. «ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սյուզաննա Դոլմազյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանը ներկայացնել ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի 1 տարվա կատարողական հաշվետվությունը:

5. Փորձաշրջանի ղեկավար Վարսիկ Ասրյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-11-07 18:16:55 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. նոյեմբերի 7
ք.Վանաձոր